նը՝ Էջմիածնի իշխանութիւնը և՛ բովանդակ տաճկահայութեան, և՛ Երուսաղէմի պատրիարքութեան վրայ ապահովելու։

Ու Զուղայեցին, նրանց օգնութեամբ, 30 քսակ[1]) դրամ ծախսելով, առնում է սուլթանից նոր հրովարտակ, որով Էջմիածնի իրաւունքները, ըստ առաջնոյն, տարածւում էին ամբողջ տաճկահայութեան վրայ եւս։ Պոլսի եւ Երուսաղէմի պատրիարքական աթոռների վրայ էլ իր ուղած մարդկանց նստեցնելով, Յակովբ կաթողիկոսը վերադառնում է Էջմիածին, Եղիազարի կաթողիկոսութիւնը թողնելով օդում կախուած, առանց աթոռի, առանց հողի։ Բայց չմոռանանք խոսոյն աւելացնել, որ այս դէպքերից ընդամէնը միայն 3 տարի անցած, Երուսաղէմի պատրիարքի մահից յետոյ, Եղիազարը կաշառելով մեծ վէզիրին, պատրիարքական աթոռը նորից ձեռք ձգեց (1670) եւ նստեց Երուսաղէմում, պատրիարք ու կաթողիկոս անունով։

Աղմուկն ու խռովութիւնը դրանով նորից սկսուեցին։ Ինչպէս երեւում է՝ Երուսաղէմի պատրիարքութիւնը չա՛տ էր շահաւէտ։ Զնայած հայութիւնը գտնւում էր տնտեսական ծանր կացութեան մէջ, բայց եւ այնպէս չէր զլանում իր առատ նուէրներն ու օժանդակութիւնը Երուսաղէմի աթոռին։ Ուստի շահամոլ ու բախտախնդիր հոգեւորականների մի խմբակ ամէն կերպ աշխատում էր իր ձեռքը ձգել այդ իւղոտ պատառը, կանգ չառնելով կաշառքի, զրպարտութեան, անգամ մատնութեան առջեւ։

Եւ տաճիկ եպարքոսներն ու կուսակալներն էլ շատ սիրով ընդ առաջ էին գնում նրանց այդ խայտառակ արարքներին, որովհետեւ մի կողմից՝ իրենց համար եկամտի մի առատ աղբիւր էր դա, իսկ միւս կողմից՝ մի դեղեցիկ միջոց առանց այն էլ պառակտուած ու քայքայուած հայ հասարակութիւնը աւելի թուլացնելու։ Նրանք, այսօր, կաշառուելով մէկ սեւագլխից, նրան պաշտպանում եւ պատրիարքական աթոռը նրա՛ն էին շնորհում, որպէսզի վաղը, նրա հակառակորդից աւելի մեծ կաշառք եւ մեծ հաւաստիացումներ ստանալով, նրան չընորհազուրկ անեն եւ նրա հակառակորդին պատրիարքական աթոռը բարձրացնեն։ Մարդ ուղղակի զզուանքով է կարդում այդ պայքարի պատմութիւնը, որի հերոսներն էին Մարտիրոս վարդ. Կաֆացին իր արբանեակներով մի կողմից, իսկ միւս կողմից՝ Եղիազար Անթապցին իր համախոհներով[1])։

Կարծէք դա քիչ էր, նոյն ժամանակներում աւելանում է մի նոր պայքար եւս պոլսահայ կեանքում — այս անգամ արդէն Կ. Պոլսի պատրիարքական աթոռի շուրջ։ Գլխաւոր դերակատարները նորից նոյնն են՝ փառամոլ ու բախտախնդիր հոգեւորականները. պայքարի միջոցները՝ նոյնպէս — կաշառք, ամբաստանութիւն, մատնութիւն։ Ու առանց այն էլ պառակտուած տաճկահայութիւնը, մանաւանդ Պոլսում, նոր բանակների է բաժանւում՝ այս կամ այն հոգեւորականի շուրջը եւ սկսում պայքարել իրար դէմ։

Յակովբ Զուղայեցին լսում է այդ ամէնը եւ անհունօրէն ցաւում։

Այլեւս ուրիշ ելք չկար օրէ օր աճող աղմուկն ու խռովութիւնները դադարեցնելու համար։ Մնում էր՝ նորից անձամբ ուղեւորուել Պոլիս։ Եւ չնայած արդէն բոլորովին զառամեալ, 78 տարեկան ծերունի, բայց եւ այնպէս յանձն է առնում ճանապարհորդութեան բոլոր դժուարութիւնները, մանաւանդ որ — ինչպէս յետոյ կը տեսնենք — քաղաքական մի առաքելութիւն եւս անհրաժեշտ էր դարձնում նրա ուղեւորութիւնը դէպի արեւմուտք։

Պոլիս հասնելով 1679 թ. դեկտեմբերին եւ կամենալով խնդիրը լուծել ընտանեբար, անմիջապէս մի նամակ է գրում Երուսաղէմ, Եղիազարին, լաւ իմանալով, որ խռովութեան գլխաւոր պատճառներից մէկը նա է։ Նամակը կրում է Զուղայեցու քրիստոնէական լայն հոգու կնիքը եւ սկսւում է այսպէս. «Սիրեցեա՛լդ իմ, ի Քրիստոս պատուական եղբայր, հայեա՛ց եւ աղեխորով լե՛ր ի վերայ թշուառութեան մերայոց, որք կան ի թագաւորական քաղաքիս, զի եւ դու մասամբ իւիք եղեր պատճառ ցաւոցս այսոցիկ. է՛կ այսր եւ խորհուրդ արարեալ,

1) Քսակը 500 տաճկական դահ. կամ 110 ֆրանկ է։

1) Զամչեան, Գ., Գլ. ԼԶ–ԼԹ.։